

ծաղիկել եւ նկարել զպատկերաց ոչ կարէի ուղիղ գծել...»:

*

Ասոնց նման քանի քանիներու մէջ մէկն ալ, որու անունը Գրիգոր է, կ'ըսէ,

«Նիւթս պահաս, թանաքս աւեր, եւ իմ պիտոյքն ոչինչ բայց միայն ցամաք հաց»...:

*

Շատ ուրիշներ ալ կը յիշեն ՔՊԻ, գրչի, Բանաֆի չունիմութիւնը կամ անպիտանութիւնը:

*

Ստեփաննոս անունով կրօնաւոր մըն ալ, զրուած հին մաղաղաթները, որոնց արժէքէն բան չէ հասկցեր, բռներ ջնջոտեր է եւ զըրուածքն ալ անհետացուցեր: Եւ ինքն իսկ կը պատմէ միամիտ պարծենկոտութեամբ,

«Զի առաջ աւետարան էր եւ անկեալ էր ի ձեռս այլազգեաց եւ թուխթ թուխթ էր արած. ես լուացի զինքս ու շատ աշխատեցայ անոր համար որ զգիրն դժար կու առնէր ու զծաղկըններ»:

* * *

ՀԱՅ ԳՐՔԵՐՈՒ ԱՒԱՐԸ,

ԳՈՂՕՆԸ ԵՒ ԳԵՐԵՎԱՐՈՒԹԻՒՆԸ

Մեր ջերմեռանդ հայերը հայ զբաղան գործերը «ի պահ» յանձնեցին եւ վանքերու մէջ «ի Քրիստոս» միարանած հոգեւորականութեան:

Գրքերու՝ անգամ սրբութիւնը, հոգեւորականի վստահելիութիւնը եւ վանքին պարբայպատ ըլլալը չեն կրցեր արգելել, որ մէկ մէկ՝ մեր՝ տիրազուրկ եղած երկրին մէջ՝ անպաշտպան մնացած բաներ աւարի տըրուին...:

Գրքերու աւարը աւելի ուշադիր խնամքով եղեր է, երբ թալանողները զիտակցեր են անոնց էջերու վրայ փռուած ոսկիի մասին: Իսկ կազմերու պատեանը եղող արծաթը եւ ոսկին, որ շատ անգամ նաեւ գոհարազարդ են եղեր՝ իրար ձեռքէ խլելով տարած են:

*

Պատմութեան մէջ մենք շատ անգամ կը պատահինք parvenu բռնակալներու, որոնք, իրենց նախորդները մոռցնել տալու համար,

հետեւողական խնամքով քանդել ոչնչացնել տուած են անոնց ձեռքով կամ օրին եղած շատ մը արժէքաւոր յուշարձաններ:

*

Մեր պատմահայրը Մարաբասէն ատենլով կ'ըսէ. «Նինոս հրամայեց հրով ոչնչացնել մինչեւ իւր օր եկած գնացած բոլոր երեւելիներ եւ հոչակաւորների մասին զրուածներ... ու միայն իւր արած քաջազորութիւնները արձանագրել»:

*

Գրիգոր Լուսաւորիչ ալ հայ մշակոյթի յօնքը շինելու ժամանակ աչքը հաներ է: Ան հրամայեց է, քրիստոնէական նախանձախնդրութեան նոպայի մէջ, որ վառեն մեհակներու մէջ պահ զրուած գրականութիւնը:

*

Մերուժան, 380 թուականին, իր պարսկասիրութեան ապացոյցը տալու համար, ուր ոտք դրեր է, այնտեղ կարգադրեր է որ փչացընեն բոլոր յոյն լեզուով մատենները: «Զորս մի անգամ զիրս գտանէր, այրէր» (Մ. Խոր.):

*

«Թշնամիք աստուածապաշտութեան բազում անգամ արշաւեալ կորուսին զկտակարանս եկեղեցոյս» (Ներսէս Գ. Կաթ.):

*

Մով. Կաղանկատուացի կ'ողբայ՝ «զմատենից եւ զկտակարանաց հրկիզութիւն»:

*

«Հրկիզեալ յանօրինաց կտակարանք եւ սպասք եւ տեղիք կալոյ նոցա» (Մ. Կաղան.):

*

Ժամանակագիրներու արձանագրած այսպիսի դէպքերէն յիշեմ՝

Աննի զրքերու դէպքը 1064-ին.

Եղեսիայի մատենադարանի դէպքը 1144-ին.

Սիւնիքի մէջ Բաղարբեղի դէպքը 1170-ին, երբ թշնամին, խաբէութեամբ տիրանալով բերդին, 10,000 գրչագիր աւար տարեր է:

*

1292-ին Եգիպտոսի Սուլթան Խալիֆ Ալ-րաֆը աւարած է Հոմիկլայ բերդը, ուր կար Կիլիկիայի կաթողիկոսի մատենադարանը: